ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Հեռ. (0231)60136 ,
gay.armavir@mta.gov.am

N 67
29 մարտ 2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները:

Կարգադրություններ չեն արձակվել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքի թիվ 11-06803-2019
«03» 04 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 21

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի թիվ 91 որոշման 1-ին կետի ,,ա" ենթակետով հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 66-Ն որոշումը և Ռոբերտ Նավասարդյանի 2019 թվականի մարտի 13-ի դիմումը.

Որոշում եմ

1. Ռոբերտ Նավասարդյանին տալ շին. թույլտվություն՝ թոնրատուն կառուցելու համար:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման լուսապատճենային օրինակն իր հիմքերով եռօրյա ժամկետում ներկայացնել Արմավիրի մարզպետարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 20

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 66-Ն որոշումը և Կարեն Գասպարյանի 2019 թվականի մարտի 14-ի դիմումը.

Որոշում եմ

1. Կարեն Լևոնի Գասպարյանին թույլատրել ԿԾ 04-033-0088-0024 հողամասի վրա իրականացնելու կառույցի քանդման աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
Հ2, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2019թվականի N 19

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Նորոշմամբ , հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով, որ Արմավիրի մարզի Գայ համայնքի Իսահակյան-4 հասցեում գտնվող Կարեն Նշանի Կարապետյանին /ծնվ. 1965թ./ պատկանող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում , ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինության նորմերի ու կանոնների խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք կամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը .

Որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի Իսահակյան փողոց տուն 4 հասցեում գտնվող Կարեն Նշանի Կարապետյանին /ծնվ. 1965թ./սեփականության իրավունքով պատկանող 0.27 հա տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 60.57քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և ծածկը ճնանաչել օրինական:

2.Սեփականատիրոջ կողմից Գայ համայնքի բյուջե է վճարվել 41.19 քմ մակերեսով ինքնակամ ծածկի համար 58432/հիսունութ հազար չորս հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ, իսկ ինքնակամ կառուցված 19.38 քմ մակերեսով օժանդակ շինության համար 33720/ երեսուներեք հազար յոթ հարյուր քսան/ՀՀ դրամ:

3.Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 72որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ